

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ՀՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԱԶԳԱԳՐՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ**

ՀԱԿՈՐՅԱՆ ԳԱՅԱՆԵ ԼԵՎՈՆԻ

**ՍԻՐԻԱՀԱՅԵՐԻ ՍՈՑԻԱԼ-ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԱԴԱՊՏԱՑԻԱՅԻ
ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ**

**Է.00.04. «Ազգագրություն» մասնագիտությամբ
պատմական գիտությունների թեկնածուի
գիտական աստիճանի հայցման ատենախոսության**

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ – 2019

**ИНСТИТУТ АРХЕОЛОГИИ И ЭТНОГРАФИИ
НАЦИОНАЛЬНОЙ АКАДЕМИИ НАУК
РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ**

АКОПЯН ГАЯНЕ ЛЕВОНОВНА

**ПРОБЛЕМЫ СОЦИАЛЬНО-КУЛЬТУРНОЙ АДАПТАЦИИ
СИРИЙСКИХ АРМЯН В РЕСПУБЛИКЕ АРМЕНИИ**

АВТОРЕФЕРАТ

**Диссертации на соискание ученой степени кандидата
исторических наук по специальности 07. 00.04 “Этнография”**

ЕРЕВАН – 2019

Ատենախոսության թեման հաստատվել է ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի գիտական խորհրդում:

Գիտական ղեկավար՝ պ.գ.դ. Մ. Վ. Գալստյան

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ պ.գ.դ. Ռ. Ս. Կարապետյան
պ.գ.թ. Հ. Գ. Սարգսյան


Առաջատար կազմակերպություն՝ ԵՊՀ Պատմության ֆակուլտետի Հնագիտության և ազգագրության ամբիոն

Պաշտպանությունը կայանալու է 2019 թ. նոյեմբերի 19-ին, ժամը 14:00-ին, ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտում գործող ԲՈԿ-ի 007 Հնագիտության և ազգագրության մասնագիտական խորհրդում (հասցե՝ Երևան – 0025, Չարենցի 15):

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2019 թ. հոկտեմբերի 10-ին:

Մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար՝

Պատմական գիտ. թեկնածու  Ա. Է. Հարությունյան

Тема диссертации утверждена на заседании ученого совета института Археологии и этнографии НАН РА.

Научный руководитель: д.и.н. М. В. Галстян

Официальные оппоненты: д.и.н. Р. С. Карапетян
к.и.н. Г. Г. Саргсян


Ведущая организация: Кафедра Археологии и этнографии исторического факультета ЕГУ

Защита состоится 19 ноября 2019 г. в 14:00 часов, на заседании специализированного комитета 007 по Археологии и этнографии при институте Археологии и этнографии НАН РА (адрес: Ереван - 0025, ул. Чаренца 15).

С диссертацией можно ознакомиться в библиотеке института Археологии и этнографии НАН РА.

Автореферат разослан 10 октября 2019 г.

Ученый секретарь специализированного совета:

Кандидат исторических наук  А. Э. Арутюнян

ԱՏԵՆԱՆՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Թեմայի արդիականությունը: XX դ. վերջին և XXI դ. առաջին տասնամյակներում աշխարհում ընթացող միգրացիոն գործընթացները, որոնք ունեն կամավոր, բռնի կամ հարկադրված բնույթ, ընդգրկում են մեծ մասշտաբներ՝ ներառելով հասարակական կյանքի տարբեր ոլորտներ ու բազմաթիվ էթնիկ հանրույթներ: Հայաստանը ևս անմասն չի մնացել այս գործընթացից: Հայ ժողովրդի համար արտագաղթը նոր երևույթ չէ, սակայն այսօր այն մեծ չափերի է հասել՝ դառնալով Հայաստանի առջև ծառայած կարևոր հիմնախնդիրներից: Այս պայմաններում ներգաղթը լուրջ դերակատարում կարող է ունենալ ոչ միայն ժողովրդագրական և տնտեսական, այլև սոցիալական և մշակութային հետևանքներով:

Ցեղասպանությունից հետո ձևավորված հայկական սփյուռքը և աշխարհի տարբեր երկրներում հայկական համայնքների գոյությունը հզոր ներուժ են համարվում Հայաստանի Հանրապետության (այսուհետև՝ ՀՀ) ժողովրդագրական, սոցիալ-տնտեսական, քաղաքական, մշակութային զարգացման առումով: Հայաստանի անկախացումից հետո սփյուռքահայերի մոտ ակտիվացել է թե՛ կամավոր, թե՛ ծագման երկրների տնտեսական ու պատերազմական իրավիճակի հետևանքով դեպի հայրենիք միգրացիան: Նմանատիպ գործընթաց սկսվեց նաև սիրիահայ համայնքում, երբ 2011 թ. Սիրիայում ընթացող պատերազմի պատճառով սիրիահայերի մի մասը տեղափոխվեց ՀՀ:

Ազգային պատկանելիության գիտակցումն ու հայրենիքի հիշողությունը միասնականացնում են հայերին՝ որպես ազգ, բայց և այնպես, հաղորդակցության ժամանակ վեր հանում միմյանց ճանաչելու և հարմարվելու դժվարությունները: Սիրիահայերը, որ ապրում էին այլ քաղաքական ու սոցիալ-տնտեսական հարաբերությունների համակարգում, այլ կրոնական ու մշակութային միջավայրում, տեղափոխվեցին բոլորովին նոր սոցիալ-մշակութային միջավայր՝ կանգնելով վերջինիս հարմարվելու անհրաժեշտության առջև: Նոր հասարակությունում ադապտացիայի գործընթացը դժվարացնող գործոնները բազմաթիվ են, որոնցից յուրաքանչյուրն իր ուրույն ազդեցությունն ունի նրանց՝ Հայաստանում ինտեգրվելու և հետագա կենսագործունեությունը շարունակելու որոշման վրա: Այս հիմնահարցը շատ արդիական է մեր օրերում և խորը ու համակարգային ստամնասիրության կարիք ունի:

Սիրիահայերի հոսքը կարևոր իրողություն էր նաև Հայաստանի համար՝ իր սոցիալ-տնտեսական, ժողովրդագրական և մշակութային հետևանքներով: Սիրիահայերը նոր միջավայրում ոչ միայն հանդիպում, այլև ներմուծում են որոշակի մշակութային տարրեր, որոնց նկատմամբ հարգանքն ու հանդուրժողական վերաբերմունքը հաջող ադապտացիայի կարևոր գործոններից են: Ուստի, ուսումնասիրությունը կարևոր է նաև այս հիմնահարցի դիտանկյունից՝ սիրիահայերի համար արդյո՞ք առկա է այնպիսի սոցիալ-մշակութային միջավայր, որը կնպաստի նրանց լիարժեք կենսագործունեությանը և ՀՀ-ից հեռանալու մտադրությունների ու քայլերի բացառմանը:

Ատենախոսական աշխատանքը կարևոր է առաջարկությունների, հիմնախնդրի կարգավորման հարցում առաջ քաշված նոր մոտեցումների և հետագայում Հայաստան ներգաղթի հետ կապված խնդիրների մեղմացման տեսանկյունից:

Ատենախոսության նպատակը և խնդիրները: Ատենախոսության **նպատակն** է ուսումնասիրել սիրիահայերի սոցիալ-մշակութային ադապտացիայի առանձնահատկությունները Հայաստանում, դուրս բերել առկա հիմնախնդիրները և մատնանշել դրանց լուծման ուղիները: Ուսումնասիրության **օբյեկտը** սիրիահայ ընտանիքներն են, որոնք 2011 թ. հետո ժամանակավոր կամ մշտական բնակություն են հաստատել ՀՀ-ում: Հետազոտության **առարկան** սիրիահայերի շրջանում տեղի ունեցող սոցիալ-մշակութային ադապտացիայի գործընթացն է:

Ատենախոսությունում առաջադրվել և քննարկվել են հետևյալ **խնդիրները**.

– Ուսումնասիրել սոցիալ-մշակութային ադապտացիա հասկացությանն առնչվող գիտական մոտեցումները:

– Բացահայտել սիրիահայ ընտանիքների սոցիալ-տնտեսական խնդիրները և դրանցով պայմանավորված գործոնների ազդեցությունը նոր հասարակությանը հարմարվելու գործընթացի վրա:

– Քննարկել սիրիահայերի մշակութային ադապտացիայի հիմնախնդիրները՝ ընտանեկան և կրոնական արժեհամակարգ, լեզվական վարքի և հաղորդակցության մշակույթի փոխակերպումներ, առօրյայի և ժամանցի կազմակերպում:

– Վերլուծել սիրիահայերի միգրացիոն վարքագիծը, դրա փոփոխման միտումները, պատճառներն ու գործոնները:

Ատենախոսությունում սիրիահայերի ադապտացիայի ուսումնասիրության **մեթոդաբանական հիմքը** ազգագրությունում և էթնոսոցիոլոգիայում ընդունված միջառարկայական համալիր մոտեցումներն են, իսկ էմպիրիկ նյութը հավաքվել է 2012-2018 թթ. հեղինակի անցկացրած հետազոտությունների արդյունքում: Հետազոտությունն իրականացվել է որակական և քանակական մեթոդների համադրությամբ: 1) Քանակական հետազոտություն (2014 թ.)՝ 184 կիսաձևայնացված հարցազրույցներ սիրիահայ ընտանիքների հետ Երևանում, Արագածոտնի, Արարատի, Արմավիրի, Կոտայքի, Շիրակի մարզերում: Քանակական հետազոտություն (2016-2017 թթ.) տեղացի և սիրիահայ ընտանիքների շրջանում՝ Երևանում, Շիրակի, Լոռու, Գեղարքունիքի, Սյունիքի, Արմավիրի, Արագածոտնի մարզերում (ընտրանքային համախմբության ծավալը կազմել է 384, որից 7%-ը՝ երևանաբնակ սիրիահայեր): Սույն հետազոտության արդյունքները հարուստ նյութ են ապահովել սիրիահայ և տեղացի ընտանիքների համեմատության, ինչպես նաև ժամանակային որոշակի կտրվածքով սիրիահայերի ադապտացիայի հիմնախնդիրներն ուսումնասիրելու համար: 2) Որակական հետազոտություն (2014 թ.)՝ խորին հարցազրույցներ սիրիահայերի հետ՝ ադապտացիայի խնդիրները խորությամբ և ամբողջությամբ հասկանալու համար: Հարցվողի ընտրության չափանիշներ են հանդիսացել սեռը, տարիքը և զբաղվածությունը (ընդհանուր քանակը՝ 36): 3) Փորձագիտական հարցազրույց (2018 թ.), փորձագետներ են հանդիսացել պետական հաստատությունների և հասարակական կառույցների ներկայացուցիչները (ընդհանուր քանակը՝ 9): 4) Փաստաթղթերի որակական վերլուծություն, մասնավորապես, առցանց պարբերականների ուսումնասիրություն: Վերջիններիս՝ սիրիահայերին առնչվող հրապարակումները դիտարկվել են 2012-2014 թթ. ժամանակահատվածում:

Ընդհանուր առմամբ, դաշտային հետազոտական աշխատանքների ընթացքում անցկացվել է 568 կիսատանդարտացված, 36 խորքային և 9 փորձագիտական հարցազրույց: Նյութերը հավաքվել են 10 քաղաքային և 25 գյուղական բնակավայրերում իրականացրած գիտարշավների և անհատական գործուղումների միջոցով: Հավաքվել են նաև միճակագրական տվյալներ Արգախի Հանրապետությունում բնակվող սիրիահայ ընտանիքների բնակության վայրի, նրանց սոցիալ-ժողովրդագրական կազմի վերաբերյալ:

Տեսական մոտեցումները և հիմնախնդրի ուսումնասիրության աստիճանը:

Ադապտացիայի սոցիոլոգիական տեսանկյան ձևավորման համար մեծ նշանակություն են ունեցել Ու. Թոմասի և Ֆ. Ջնանեցկու, Է. Դյուրքեյմի, Մ. Վեբերի, Թ. Պարսոնսի հայացքները: Սոցիալական ադապտացիայի տեսական դրույթների մշակման վրա կարևոր ազդեցություն են թողել նաև Ռ. Մերտոնի աշխատանքները, Հ. Սպենսերի հավասարակշռության տեսությունը, Է. Գիդդենսի և Ջ. Միդի դերային հայեցակարգը, Ա. Շյուցի ֆենոմենոլոգիական հայացքները, Ի. Գոֆմանի աշխատությունը, Օ. Ջոտովայի և Ի. Կրյաժևայի նպատակաուղղված վարքի հայեցակարգը: Սոցիոլոգիական մոտեցման

ձևավորման համար մեծ նշանակություն ունի Լ. Կորեյի՝ ադապտացիայի սոցիոլոգիայի տեսա-մեթոդաբանական հիմքի մշակման փորձը: Հոգեբանական տեսություններից արժեքավոր են Կ. Ռոջերսի և Ա. Մալլուի աշխատանքները:

Ատենախոսության տեսական մատուցման քննարկվել են նաև Լ. Շպակի, Ռ. Ռեդֆիլդի, Ռ. Լինտոնի, Մ. Հերսկովիցի, Կ. Օբերգի, Պ. Ադլերի, Մ. Վինկելմանի, Ջ. Բերրիի, Հ. Էսսերի և Ֆ. Հելմանի՝ սոցիալ-մշակութային ադապտացիայի վերաբերյալ մոտեցումները:

Սիրիահայ համայնքի ձևավորման և պատմական զարգացման առանձնահատկություններին ծանոթանալու համար օգտվել ենք Ա. Աբրահամյանի, Ս. Գասպարյանի, Հ. Թովուզյանի, Խ. Թուրլյանի, Կ. Դալլաքյանի, Է. Մելքոնյանի աշխատանքներից: Հայագիտության մեջ բարձր են գնահատվում Վ. Սվազյանի, Հ. Մարությանի գիտական աշխատությունները, որոնք վերաբերում են ինքնության և հայկական սիյուռքի ձևավորման հիմնախնդիրներին: Սիրիահայ համայնքի, մասնավորապես, Քեսաբի վերաբերյալ արժեքավոր է Հ. Չոլաքյանի սովորաձավալ ուսումնասիրությունը: Սիրիահայերի՝ խորհրդային շրջանի հայրենադարձության ուսումնասիրության համատեքստում կարևորվում են Հ. Մելիքսեթյանի, Տ. Ղանալանյանի, Գ. Սվազյանի, Հ. Սարգսյանի, Մ. Թիթիզյանի աշխատանքները: Հայագիտության մեջ մեծ է Ա. Ստեփանյանի վաստակը, ով ազգաբանական տեսանկյունից ուսումնասիրելով հայրենադարձությունը՝ ներկայացնում է նորեկների ադապտացման և ինտեգրման խնդիրները:

Հետխորհրդային շրջանում հայրենադարձների ինտեգրացիայի խնդիրներին անդրադարձել է Ա. Մկրտչյանը: «Վերադարձ Հայաստան» հիմնադրամն իր ուսումնասիրություններում անդրադարձել է նրանց փորձառությանը, Հայաստան տեղափոխվելու պատճառներին և ակնկալիքներին, հասարակական շփումներին և այլն: Ադրբեջանահայ փախստականների ինտեգրման առանձնահատկությունների վերաբերյալ աշխատանքներ են հրատարակել Գ. Պողոսյանը և Գ. Ավագյանը, Է. Հովհաննիսյանը և այլք: Հայաստանի բնակչության արդի միգրացիոն գործընթացների, մասնավորապես, աշխատանքային միգրացիայի սոցիալ-մշակութային հետևանքների, վերադարձած միգրանտների ադապտացիայի ուսումնասիրության համատեքստում արժեքավոր են Մ. Գալստյանի աշխատությունները: Սիրիայի հայ համայնքի զարգացման որոշ առանձնահատկություններին և մինչև պատերազմն առկա հիմնախնդիրներին են անդրադարձել Ա. Փաշայանը և Լ. Հարությունյանը:

Սիրիահայերի ադապտացիայի արդի վիճակի ուսումնասիրության համատեքստում արժեքավոր է Ռ. Կարապետյանի հեղինակությամբ և ղեկավարությամբ իրականացրած նախագիծը: Հրատարակված աշխատությունում նրանք ներկայացնում են Սիրիայից գաղթած հայ փախստականների ադապտացման և ինտեգրման խնդիրների էթնոսոցիոլոգիական ուսումնասիրության արդյունքները, վերլուծում սիրիահայերի արդի վիճակը և հետագա կենսագործունեության հեռանկարները: Ա. Հակոբյանը իր «Սիրիահայերը Հայաստանում. հայրենադարձներ, թե՛ փախստականներ» գեկուզում անդրադառնում է նրանց՝ Հայաստանում ունեցած իրավական, սոցիալական, տնտեսական հիմնախնդիրներին, հանդես գալիս ինտեգրմանը նպաստող առաջարկություններով:

Ատենախոսության գիտական նորույթը և գործնական նշանակությունը: Աշխատանքի գիտական նորույթը, դրա գործնական և կիրառական նշանակությունն ամփոփվում են հետևյալ դրույթներում.

– Հայաստանում մինչև այժմ կատարված ուսումնասիրությունները վերհանում են սիրիահայերի, մի դեպքում, տնտեսական, մեկ այլ դեպքում, սոցիալական ինտեգրման հարցերը: Սիրիահայերի սոցիալ-մշակութային ադապտացիայի համալիր վերլուծությունը կատարվում է առաջին անգամ:

– Ատենախոսությունում համեմատական հարուստ նյութ է ներկայացվում սիրիահայերի և տեղացի հայերի էթնոմշակութային առանձնահատկությունների վերաբերյալ:

– Ատենախոսությունում նորոյթ է այն մոտեցումը, որ սիրիահայերի աղապատացիայի վերլուծությունը կատարվել է քանակական և որակական մեթոդների համադրությամբ, իսկ ռաումասփրության ժամանակահատվածն ընդգրկում է նրանց՝ ՀՀ տեղափոխվելու սկզբնական շրջանից մինչև մեր օրերը:

– Գործնական նշանակությունը պայմանավորված է այն բանով, որ աշխատանքում տեղ գտած դրույթները հնարավորություն են տալիս կատարելու մի շարք առաջարկություններ սիրիահայերի ինտեգրման հայեցակարգերի և քաղաքականության մշակման առումով:

– Էթնոսոցիոլոգիական հետազոտության արդյունքների մի մասն առաջին անգամ է դրվում գիտական շրջանառության մեջ:

– Ուսումնասիրությունը հնարավորություն է տալիս սիրիահայերի օրինակը համարել մոդել Հայաստան ներգաղթի համար՝ վերհանելով այդ երևույթի բացթողումները և ձեռքբերումները:

– Ատենախոսությունում տեղ գտած մի շարք հիմնահարցեր կարող են ունենալ տեսական ճանաչողական և գործնական նշանակություն այդ խնդիրներով զբաղվող մասնագետների համար:

Ատենախոսության փորձաքննությունն ու պաշտոնական հավանությունը: Աշխատանքը քննարկվել և հավանության է արժանացել ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի էթնոսոցիոլոգիայի և հայ ազգագրության բաժինների համատեղ նիստում: Ատենախոսության հիմնական դրույթները հրատարակված են տասից ավելի գիտական հոդվածներում: Քննարկվող դրույթներն ու հարցադրումները ներկայացվել են հանրապետական և միջազգային գիտաժողովներում:

Ատենախոսության ծավալն ու կառուցվածքը: Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, չորս գլուխներից՝ համապատասխան ենթագլուխներով, եզրակացությունից, օգտագործված սկզբնաղբյուրների և գրականության ցանկից ու հավելվածից (հարցաթերթեր, հարցաշարեր, աղյուսակներ, գծապատկերներ):

ԱՏԵՆԱՒՈՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Ներածությունում ձևակերպվում ու հիմնավորվում են թեմայի արդիականությունը, աշխատության նպատակն ու խնդիրները, գիտական նորույթը, մեթոդաբանական հիմքերն ու օգտագործված աղբյուրները:

ԳՐՈՒԽ ԱՌԱՋԻՆ

ՍԻՐԻԱԿԱՅ ՀԱՄԱՅՆՔԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ. ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՏԵՍԱ-ՄԵԹՈԴԱԲԱՆԱԿԱՆ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐ

1.1 Սիրիահայերի սոցիալ-մշակութային աղապատացիայի ուսումնասիրության տեսա-մեթոդաբանական հիմքերը: Աղապատացիան միջառարկայական, ինտեգրատիվ հասկացություն է, որն օգտագործվում է բազմաթիվ գիտություններում: Մեր հետաքրքրությունների շրջանակում են գտնվում հումանիտար գիտություններում առկա մի շարք տեսական մոտեցումներ՝ նպատակ ունենալով ցույց տալ, թե դրանցից որոնք են առնչվում սիրիահայերի սոցիալ-մշակութային աղապատացիայի տեսական և գործնական խնդիրների պարզաբանմանը: Սոցիալ-մշակութային աղապատացիան համարվում է սոցիալական աղապատացիայի տարատեսակ. այն հանդիսանում է գործընթաց և դրա արդյունք, ինչի շնորհիվ մարդ հասնում է համատեղելիության նոր մշակութային միջա-

վայրի հետ: Լ. Շպակի կարծիքով՝ սոցիալ-մշակութային ադապտացիան սուբյեկտի և սոցիալ-մշակութային միջավայրի փոխադարձ հարմարվելն է հոգևոր-պրակտիկ հնարավորությունների և գործունեության արդյունքների փոխանակման հիման վրա: Որպես սոցիալ-մշակութային ադապտացիայի հոմանիշ՝ կիրառվում է նաև «ակուլտուրացիա» հասկացությունը, որի դասական սահմանումը տվել են մշակութային մարդաբաններ Ռ. Ռեդֆիլդը, Ռ. Լինտոնը, Մ. Հերսկովիցը: Նրանց կարծիքով՝ ակուլտուրացիան երևան է գալիս այն ժամանակ, երբ տարբեր մշակույթների պատկանող խմբերի ներկայացուցիչներ անմիջական և երկարատև փոխհարաբերությունների մեջ են մտնում, ինչի հետևանքով փոփոխություններ են տեղի ունենում մեկ կամ երկու խմբերի մշակութային մոդելներում: Կ. Օբերգը օգտագործում է «մշակութային շոկ» տերմինը՝ սահմանելով այն որպես լարվածության և անհանգստության արդյունք, որն առաջ է գալիս այլ մշակույթների հետ շփման ժամանակ՝ խախտելով սովորական դարձած մշակութային և հասարակական կանոնները: Այն վերապրելու ժամանակը կախված է տարբեր հանգամանքներից և գործոններից, օրինակ, այլ մշակույթի ներկայացուցիչների հետ ունեցած փոխազդեցության փորձից, սեփական և ընդունող մշակույթների տարբեր լինելու աստիճանից, խորությունից և այլն: Սիրիահայերի դեպքում այս երևույթը մեղմ է արտահայտվում, քանի որ խոսքը վերաբերում է ոչ թե տարբեր էթնիկ հանրույթներին, այլ նույն էթնիկ խմբի երկու հատվածներին, որոնք ունեն ծագման ընդհանրություն, նախնիների մասին միասնական պատկերացումներ, սակայն ապրել են տարբեր մշակութային և հասարակական համակարգերում:

1.2 Սիրիահայ համայնքի զարգացման առանձնահատկությունները: Հայերը Սիրիայում բնակություն են հաստատել հնագույն ժամանակներից, սակայն համայնքը մեծապես համալրվել է 1915 թ., երբ Հայոց ցեղասպանությունից հետո մեծ թվով հայեր գաղթեցին Սիրիա: Հայ համայնքը XVI-XVIII դդ. համալրվել է Ջուղայից, Երևանից, Ղարաբաղից, Սեբաստիայից, Ալևից, Մալաթիայից, Սասունից, Արաբկիրից, Տիգրանակերտից, Ուրֆայից և այլ վայրերից, իսկ 1920-ական թթ. սկզբին՝ ինչպես Արևմտյան Հայաստանից, այնպես էլ Կիլիկիայից գաղթած հայերով: Նրանք, ժամանակի ընթացքում ինքնակազմակերպվելով որպես համայնք, ինտեգրվեցին Սիրիայի հասարակական կյանքում: Աստիճանաբար տարագիրների զանգվածը վերաճեց կազմակերպված ու կենսունակ համայնքի, որը ձգտում էր ամեն կերպ պահպանել ազգային ինքնությունը: Հայ համայնքի ազգային կյանքը ձևավորում են բազմաթիվ բարեգործական, մշակութային, հայրենակցական, մարզական և այլ միություններ ու կազմակերպություններ, որոնք գլխավորապես կենտրոնացած են Հալեպում:

XX դ. հայրենադարձության տարիներին Խորհրդային Հայաստան են ներգաղթել հազարավոր սիրիահայեր: Հայրենադարձությունից հետո երկար ժամանակ պահանջվեց՝ համայնքի նախկին կենսունակությունը վերականգնելու համար: Տարիներ անց արդեն այս համայնքին սպառնացող վտանգներն այլ բովանդակություն ստացան, էթնիկ ինքնության պահպանման գործընթացը բազմաթիվ խոչընդոտների առջև կանգնեց. 1) խառնամուսնություններն արաբների, արաբ քրիստոնյաների հետ, 2) արաբական մշակույթի ազդեցությունն երիտասարդների վրա, դրա ակտիվ ներմուծումը հայ համայնք, 3) Սիրիայում տնտեսական իրադրության վատթարացումը, ինչն էապես նպաստել է արտագաղթի աշխուժացմանը:

Մինչև 2011 թ.՝ սիրիահայ համայնքը պաշտոնապես հաշվվում էր 100000 մարդ, որից Հալեպում՝ մոտ 60000-70000, Դամասկոսում՝ մոտ 5000-6000: Համայնքի թվի վերաբերյալ շրջանառվում են նաև ավելի նվազ տվյալներ՝ 60000-70000-ի սահմաններում: 2011 թ. սկսված պատերազմը ճակատագրական եղավ սիրիահայ համայնքի և հազարավոր սիրիահայերի համար՝ նրանց ցրելով աշխարհով մեկ: Սիրիահայերի տա-

րերային ներհոսք սկսվեց նաև դեպի ՀՀ: Պատերազմական տարիների ընթացքում հայերն ունեցան թե՛ մարդկային, թե՛ նյութական կորուստներ: Վնասվեցին նաև համայնքային հաստատություններ՝ դպրոցներ, եկեղեցիներ և այլն:

1.3 Սիրիահայերը Հայաստանում: Պատերազմի պատճառով սիրիահայերը սկսեցին տեղափոխվել Հայաստան: Նրանց թվի վերաբերյալ առաջին պաշտոնական տեղեկատվությունն եղավ 2013 թ., ըստ որի՝ միայն այդ տարի ՀՀ է տեղափոխվել 6000-7000 մարդ: 2014 թ. փետրվարի դրությամբ ՀՀ-ում բնակվել են շուրջ 11000 սիրիահայեր: 2017 թ. արդեն շրջանառվում էր այն տեղեկատվությունը, որ պատերազմի բռնկվելուց ի վեր մոտ 22000 սիրիահայեր են եկել Հայաստան: Նրանց զանգվածը շատ հոսուն էր, Հայաստանը ոմանց համար դարձավ նաև տարանցիկ երկիր: Այսօր նրանց թվի վերաբերյալ պաշտոնական տեղեկատվություն չկա, սակայն համաձայն ոչ պաշտոնական տվյալների՝ 2018 թ. ՀՀ-ում բնակվել են 5000-8000 սիրիահայեր:

Սիրիահայ համայնքի մեծամասնությունը բնակվում է Երևանում, մի որոշ զանգված՝ ՀՀ մարզերում՝ Արմավիր, Արարատ, Կոտայք և Շիրակ: Սիրիահայերը Հայաստանում ունեն տարբեր իրավական կարգավիճակ՝ քաղաքացիներ (երկքաղաքացիներ), փախստականներ և ապաստան հայցողներ, ժամանակավոր կամ մշտական կացություն ունեցողներ, որի տրամադրման ընթացակարգերն ու գործոնթագն ապահովվել է ՀՀ կառավարության կողմից: Բազի կառավարությունից, սիրիահայերի խնդիրներով զբաղվել են նաև տեղական և միջազգային բազմաթիվ կազմակերպություններ: Մյուս կողմից, նրանք են ստեղծել սեփական ինստիտուցիոնալ կառույցներ (օրինակ, «Հալեպ» հայրենակցական բարեսիրական ՀԿ և այլն)՝ նոր միջավայրում իրենց առջև ծագած խնդիրները լուծելու նպատակով:

1.4 Հայաստան տեղափոխված սիրիահայերի սոցիալ-ժողովրդագրական կազմը: Հայաստանում առկա ժողովրդագրական խնդիրների մեղմացման համատեքստում կարևոր է դառնում սիրիահայերի դերը՝ ՀՀ-ի համար առիթ ստեղծելով իրապես վերլուծել իրավիճակը և լուրջ քայլեր ձեռնարկել նրանց ըստ արժանվույն գնահատելու ուղղությամբ: Կարևորելով խնդրի ուսումնասիրությունը՝ այս ենթագլխում ներկայացրել ենք, թե ինչ ժողովրդագրական, կրթական և մասնագիտական ներուժ է տեղափոխվել Հայաստան: Ըստ հետազոտության արդյունքների՝ անչափահասները կազմում են ընդհանուրի մոտ 1/4 մասը՝ 26.2%: Հատկանշական է նաև երիտասարդների կշիռը՝ 28.6%, որի մոտ 39%-ը ամուրի է, իսկ այս փաստը կարող է իր դրական ժողովրդագրական ազդեցությունը թողնել ՀՀ-ում: Միջին սերնդի ներկայացվածությունը ևս բավական մեծ է՝ 27.4%, որը մոտ 10%-ով ավելի շատ է ավագ տարիքային խումբը ներկայացնող ցուցանիշից: Ընդհանուր սեռային կազմը հետևյալն է՝ արական՝ 45.6%, իգական՝ 54.4%:

Սիրիահայերի 40%-ն ունի թերի միջնակարգ, 24%-ը՝ միջնակարգ կրթություն: Միայն 23%-ն է ստացել բարձրագույն և 5%՝ միջին մասնագիտական կրթություն (8%-ը դեռ սովորում է բուհերում): Բարձրագույն և թերի բարձրագույն կրթություն ունեցողների մեջ ավելի շատ են կանայք, քան տղամարդիկ, և ավելի շատ՝ երիտասարդները, քան միջին և ավագ սերնդի ներկայացուցիչները:

ՀՀ-ում գտնվող սիրիահայերի 31%-ը չունի մասնագիտություն, իսկ 69%-ի մասնագիտական նկարագիրը շատ բազմազան է և ընդգրկում է և՛ հասարակական կյանքի տարբեր ոլորտների մասնագետներին (առողջապահություն, կրթություն, մշակույթ և այլն), և՛ արհեստով զբաղվող մարդկանց (երկաթագործներ, ոսկերիչներ, դերձակներ, ավտոմեքանորոգողներ և այլն):

Սիրիահայերը ՀՀ եկել են ընտանեկան տարբեր կազմով, սակայն այստեղ ապրելու տարիներին այդ կազմում տեղի են ունեցել որոշ փոփոխություններ: Ընտանիքների մեծ մասը (63.3%) երկսերունդ է: Հաջորդ մեծ զանգվածը՝ 18.5%-ը, կազմում է եռասերունդ ընտանիքը, որտեղ ավագ սերնդի ներկայացուցիչներն ապրում են զավակների և թոռ-

ների հետ միասին: Ելնելով ստեղծված կենցաղային պայմաններից՝ սիրիահայ ընտանիքների 13.9%-ը Հայաստանում բնակվում է խառը կազմով:

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱԴԱՊՏԱՑԻԱՅԻ ԳՈՐԾԸՆԹԱՅԸ ՍԻՐԻԱՀԱՅԵՐԻ ՇՐՋԱՆՈՒՄ

2.1 Սիրիահայերի կեցության խնդիրները: Պատերազմի հետևանքով Սիրիայում վնասվել են բազմաթիվ բնակելի, հասարակական և մասնավոր շինություններ, շատ սիրիահայեր կորցրել են իրենց բնակարանները և ունեցվածքը: Նրանցից շատերը ոչ միայն չեն հասցրել վաճառել այն, այլև չեն մտածել այդ ուղղությամբ՝ հետ վերադառնալու մտադրություն ունենալով: Սակայն, հաստատվելով Հայաստանում, նրանք առաջին հերթին բախվում են այդ խնդրին. բնակարանի հարցը ՀՀ-ում ապրող սիրիահայերի առաջնային հիմնախնդիրներից է, որի լուծումը կարող է ապահովել նրանց մշտական բնակության հեռանկարը մեր երկրում: Ըստ հետազոտության տվյալների՝ սիրիահայ ընտանիքների 74%-ը բնակվում է վարձով, նրանց միայն 1/4 մասն է բնակվում առանց վարձավճար տալու՝ կա՛մ սեփական բնակարաններում, կա՛մ հարազատների տանը, կա՛մ հանրակացարաններում: Սիրիայում հայերն ապրել են ընդարձակ բնակարաններում, ոմանք՝ սեփական տներում, որոնք ապահովված են եղել անհրաժեշտ կենցաղային և կոմունալ հարմարություններով, կահույքով, տեխնիկայով և այլն: Այսօր նրանց մի մասի վարձակալական բնակարանները բավականին փոքր են, ներքին հարդարված վիճակը և կոմունալ-կենցաղային պայմանները՝ ոչ լիարժեք, կահույքի և տեխնիկայի տեսակները՝ ոչ բոլորին հասանելի:

2.2 Զբաղվածության խնդիրը սիրիահայերի շրջանում: Զբաղվածության խնդիրը պարզելու համար կատարել ենք նրանց կարգավիճակի համեմատական վերլուծություն Հայաստանում և Սիրիայում: Հայաստան տեղափոխվելուց հետո նրանց շրջանում կտրուկ աճել է գործազուրկների թիվը. ըստ հետազոտական տվյալների՝ 39%-ը չի կարողանում աշխատանք գտնել, մինչդեռ Սիրիայում նրանք աշխատել են:

Տնային տնտեսուհի կարգավիճակը ևս հետաքրքիր փոփոխություն է կրել՝ 27%-ից դառնալով 20%, քանզի Սիրիայում երբեմնի տնային տնտեսուհիներն այժմ աշխատանք են փնտրում, ոմանք՝ նաև աշխատում:

Փոխվել է նաև ինքնազբաղվածների և վարձու աշխատողների հարաբերակցությունը. Սիրիայում հայերն ավելի մեծ ծավալներով են իրականացրել ձեռնարկատիրական գործունեություն, քան ՀՀ-ում: Սեփական ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվողների համար ոլորտները հիմնականում տարբեր են՝ համեմատ Սիրիայի: Մեկ-երկուսի դեպքում որոշակի համընկնում է նկատվում, ընդ որում, Հայաստանում ծառայությունների մատուցման շրջանակը նեղանում է: Փաստորեն, շատ ոլորտներ բաց են մնում, և նրանք հնարավորություն չեն ունենում շարունակել Սիրիայում ծավալած ձեռնարկատիրական գործունեությունը: Արդյունքում, այլ տարբերակ չգտնելով, ի ցույց են դնում իրենց ձեռքի աշխատանքները, խոհարարական ձիրքերը՝ միաժամանակ ապրուստի համար գումար վաստակելով: Ժամանակի ընթացքում, արագ սննդի կետերում ընդլայնելով ծառայությունների շրջանակը և այս ոլորտում հաջողությունների հասնելով, նրանք հիմնում են «Հալեպ», «Քեսաբ», «Զաթար» և այլ անվանումներով իրենց սրճարան-ռեստորանները՝ շրջանառության մեջ դնելով սիրիական կերակրատեսակներ և նոր մշակույթ հաղորդելով սպասարկման ոլորտին:

2.3 Սիրիահայերի մասնակցությունը ՀՀ-ի հասարակական և քաղաքական կյանքին: Սիրիահայերի համար Հայաստանում փոխվում է ոչ միայն մշակութային կյանքը, սոցիալական կենցաղն ու տնտեսական համակարգը, որում նրանք որոշակի

դիրք էին զբաղեցնում և որոշակի կարգավիճակի կրողներ էին, այլև քաղաքական համակարգը: Արդյունքում անխուսափելի է դառնում նոր հասարակական-քաղաքական միջավայրին հարմարվելու գործընթացի մեջ մտնելը: Ըստ ուսումնասիրության արդյունքների՝ սիրիահայերի կեսից ավելին չի հետաքրքրվում ՀՀ-ի քաղաքական կյանքով, որում գրեթե հավասարաչափ ներգրավված են և՛ արական, և՛ իգական սեռի ներկայացուցիչները:

Հարցվողների 14%-ն ունի կուսակցական պատկանելիություն: Սա ենթադրում է ինչպես Սիրիայում, այնպես էլ Հայաստանում ֆորմալ անդամակցություն այս կամ այն կուսակցությանը: Սիրիահայերի շրջանում որևէ կուսակցության անդամակցելու հարցը սերտորեն կապված է սեռի հետ, քանզի նրանց մեջ 2/3-ից ավելին տղամարդիկ են: Սակայն գործող ավանդական կուսակցություններում կանանց անդամակցությունը չի սահմանափակվում միայն քաղաքական գործունեությամբ, նրանք նաև մեծածավալ բարեգործական աշխատանքներ են կատարում համայնքի համար: Քաղաքացիական ակտիվության, ցույցերի, հասարակական նախաձեռնությունների դեպքում ևս ակտիվություն ցուցաբերողները հարյուրի մեջ ընդամենը հինգն են, իսկ նրանց մեջ տղամարդիկ չորս անգամ ավելի շատ են կանանց համեմատ: Նկարագրված պատկերը որոշակի փոփոխության ենթարկվեց 2018 թ. ապրիլ-մայիս ամիսներին՝ Հայաստանում տեղի ունեցած համազգային շարժման օրերին՝ ոչ միայն մեծացնելով սիրիահայերի ակտիվության, այլև տղամարդկանց հետ միասին կանանց մասնակցության ցուցանիշը: Բացի այդ, նոր կառավարության ձևավորումից հետո նաև սիրիահայերը ներգրավվեցին պետական տարբեր գերատեսչությունների մեջ, ինչը մեծ ոգևորություն առաջացրեց համայնքում:

2.4 Կրթության դերը սիրիահայերի ինտեգրացիոն գործընթացում: Կրթությունը վճռորոշ տեղ է զբաղեցնում սիրիահայերի կյանքում՝ ոչ միայն անհրաժեշտ հմտություններ կուտակելու, հետագայում լավ աշխատանք ու ապագա ունենալու, այլև հայ հասարակությանն ինտեգրվելու տեսանկյունից: Կրթական համակարգում ինտեգրացիան սկսվում է մանկապարտեզներից: ՀՀ-ում մեծ թիվ են կազմում այն սիրիահայ ընտանիքները, որոնց երեխաները հաճախում են պետական, նաև մասնավոր մանկապարտեզներ: Մանկապարտեզներից բացի, սիրիահայերի համար գործում են նաև տարբեր կենտրոններ՝ նախադպրոցական տարիքի երեխաների կրթական ինտեգրացիային նպաստելու համար:

Երբ մեծ թիվով սիրիահայեր ապաստան գտան ՀՀ-ում, 2012 թ. կառավարությունը որոշակի աշխատանքներ նախաձեռնեց նաև դպրոցական կրթության կազմակերպման ուղղությամբ: Ընդհանուր առմամբ, կրթության ոլորտում կառավարության կողմից իրականացված քայլերը հետևյալներն են՝ 1) «Կիլիկեան» դպրոցի բացում, որը գործել է մեկ ուսումնական տարի, 2) երեխաների ներգրավում հանրակրթական հաստատություններ, 3) ուսանողների վարձավճարների զեղչ և փոխհատուցում մի շարք հիմնադրամների հետ համատեղ, 4) դասընթացների կազմակերպում:

Սիրիահայերի՝ կրթության ոլորտում ունեցած խնդիրները հիմնականում կապված են կրթական ծրագրերի տարբերության, լեզվական առանձնահատկությունների և նոր միջավայրին հարմարվելու դժվարությունների հետ: Հայաստանի և Սիրիայի դպրոցական կրթական համակարգերը տարբեր են մի շարք առումներով՝ առարկաներ, տերմինաբանություն, դասանյութի ծավալ և այլն: Սիրիականից տարբեր է նաև հայաստանյան բուհական ծրագիրը, ինչն էլ մտահոգության առարկա է դառնում նրանց համար հատկապես կրթության որակի և արդյունավետության գնահատման տեսանկյունից:

2.5 Սիրիահայերի միգրացիոն վարքագիծը: Սույն ենթաբաժնում ներկայացված է սիրիահայերի՝ Հայաստանից հեռանալու մտադրությունների ու ցանկությունների և

դրանց հիմքում ընկած գործոնների համալիր վերուծությունը՝ ըստ համեմատական հետազոտական տվյալների: ՀՀ տեղափոխվելու առաջին տարիներին սիրիահայերի կեսից ավելին՝ 52.2%-ը, մտադրություն ուներ հնարավորության դեպքում հեռանալ երկրից, և միայն 1/4 մասն էր վստահաբար մտածում, որ կմնա Հայաստանում: Որոշակի մաս էր կազմում նաև հավանաբար չմեկնողների խումբը (22.8%), ինչը ևս հավանականության որոշակի աստիճանով մեծացնում էր մեկնելու տրամադրվածություն ունեցողների զանգվածը: Տարիներ անց արդեն նրանց կեսից քիչն է մտադրություն հայտնում մեկնել Հայաստանից (44%): Այս ցուցանիշի փոփոխությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ այն սիրիահայերը, որոնք 2014 թ. մտածում կամ ցանկություն էին հայտնում այլ երկիր տեղափոխվելու մասին, արդեն կատարել են իրենց քայլը՝ կյանքի այդ փուլի համար Հայաստանը համարելով ժամանակավոր ապաստան:

Սիրիահայերն ունեն երկրից հեռանալու իրենց պատճառները, որոնց մեծ մասը սոցիալ-տնտեսական է: Եթե առաջին տարիներին սոցիալ-տնտեսական գործոնն ամենակարևորն էր (72%), ապա վերջին տարիներին, ավելի խորանալով, դառնում է գերակա պատճառ բոլոր պատճառների մեջ (84.6%): ՀՀ տեղափոխվելու առաջին տարիներին սիրիահայերը նաև մշակութային և հոգեբանական մեծ շոկ են ապրել, ինչը ոչ միայն որոշակի հետք է թողել, այլև ումանց համար երկրից հեռանալու պատճառ հանդիսացել: Վերջինս, սակայն, տարիների ընթացքում պակաս կարևոր է դառնում և զիջում իր տեղը երկիրը լքելու պատճառների մեջ: Եթե առաջին տարիներին շատերը ցանկանում և մտածում էին վերադառնալ Սիրիա, ապա տարիներ անց նրանք ավելի ռեալ են մտածում՝ մոտ չորս անգամ կրճատելով Սիրիա տեղափոխվելու հավանականությունը:

ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ

ՍԻՐԻԱ ՀԱՅԵՐԻ ՍՈՑԻԱԼ-ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԱԴԱՊՏԱՑԻԱՅԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1 Սիրիահայերի ընտանեկան արժեհամակարգը: Ափյուռքում ընտանիքը եղել է առաջնային ազենտներից մեկը՝ ազգային ինքնության ձևավորման, ավանդույթների յուրացման ու փոխանցման և հայապահպանության հարցում: Սիրիահայերի համար հայ ընտանիքի մոդելը հետևյալ նկարագրությունն ունի՝ այն պարտադիր պետք է ստեղծվի եկեղեցական պատկառոտությամբ և լինի ամբողջական ու ամուր՝ ի շնորհիվ ամուսինների հավատարմության և համերաշխության: Երեխան պետք է ծնվի ամբողջական ընտանիքում և դաստիարակվի հայկական ոգով՝ օտար վարք ու բարքերից հեռու: Ընտանիքը ֆինանսապես պետք է ապահովի տղամարդը, իսկ կինը պատասխանատու լինի կենցաղային կարևոր և երկրորդային հարցերի համար:

Սիրիահայերի գերակշիռ մասը դեմ է ազգամիջյան ամուսնություններին, և միայն տասը հոգուց մեկն է կարծում, որ նման ամուսնությունն ընդունելի կլինի, եթե ընտանիքում պահպանվի հայ ազգային մշակույթն ու ավանդույթները: Իսկ երբ խոսքը վերաբերում է հայաստանաբնակ հայերի հետ ամուսնությանը, նրանց 96%-ը հավանություն է տալիս հայաստանցի հայ-սիրիահայ ամուսնություններին: Չնայած ՀՀ գալու առաջին տարիներին նրանք այլ մոտեցում ունեին հարցի վերաբերյալ, սակայն այսօր տևական բնակությունը նրանց շրջանում, անձնական, ընկերական և գործընկերային շփումները փոխել են հայաստանցուն՝ որպես զուգընկեր ընդունելու պատրաստակամության մակարդակը:

3.2 Սիրիահայերի ամուսնա-հարսանեկան ծիսական համակարգը: Հայերի հարսանեկան հանդիսությունը Սիրիայում կրում էր ինչպես ավանդական հայկական, այնպես էլ արաբական մշակույթի տարրեր՝ երաժշտություն, ուտեստ և այլն: Սակայն նոր սոցիալ-մշակութային միջավայրում նրանց կողմից հարսանեկան ծիսական տար-

րերը պահպանելը, համայնքում ընդունված և տարածված հարսանեկան ավանդույթները շարունակելը կախված են մի շարք գործոններից՝ էթնիկ պատկանելիություն, նյութական վիճակ և այլն: Նոր միջավայրում նրանք կարողանում և պահպանում են եկեղեցում պասկաղովելու կարևոր ծեսը, սակայն ամուսնությունը հարսանիքի օրը գրանցելու արարողությունը, ըստ Հայաստանում ընդունված սովորույթի, այլևս չի համարվում նրանց հարսանեկան ծիսակարգի պարտադիր տարր: Եթե նորապասկները սիրիահայեր են, ապա հարսանեկան հանդիսությունը կազմակերպում են իրենց հարազատ դարձած ավանդական տարրերով: Եթե զույգից մեկը հայաստանցի է, իսկ նման դեպքերում մեծ մասամբ աղջիկն է հայաստանցի, ապա երաժշտության մեջ ավելի քիչ է նախապատվություն տրվում արաբականին, իսկ ուտեստները հիմնականում ընտրվում են հայկական ռեստորանի ճաշացուցակից, չնայած որ իրենց քիմքին հաճելի ուտելիքները հնարավորության սահմաններում նույնպես մատուցվում են: Ամուսնացող զույգերի և նրանց ազգականների ֆինանսական հնարավորություններից կախված՝ փոխվել է նաև հարսանեկան նվերների արժեքն ու ձևը, հարսանեկան ճանապարհորդության մեկնելու տարածվածությունը:

3.3 Սիրիահայերի կրոնական և տոնական վարքագիծը: Սիրիահայերը բազմաթիվ խնդիրների կողքին բախվում են նաև հայի ինքնությունը կազմող կրոնական հարցերին, որոնք կարևոր ազդեցություն ունեն փոխադարձ հանդուրժողականության, ազգային-կրոնական արժեհամակարգի շուրջ համախմբված հայրենակիցների հետ հայրենիքում ապրելու գործընթացի վրա: Այդ նպատակով ուսումնասիրվել է նաև նրանց կրոնական և տոնաձիսական վարքագիծը: Այն հարցին, թե ինչպիսի վերաբերմունք ունեն կրոնի նկատմամբ, սիրիահայերի 98%-ը նշել է, որ հավատում է: Նրանց 39%-ը մշտապես այցելում է եկեղեցի: Ի տարբերություն եկեղեցի այցելության՝ պահք պահելը պակաս տարածում ունի նրանց շրջանում (9%): Ունենալով նման կրոնական վարքագիծ՝ նրանք որոշակի անհանդուրժողականություն են ցուցաբերում հայաստանաբնակների հավատի պակասի/բացակայության, եկեղեցու և եկեղեցական արարողությունների նկատմամբ անտարբերության, պատարագներին այլ կրոնական ուղղության ներկայացուցիչների առկայության, կրոնական տոների չհիմնացության, դրանք ըստ էության չնշելու, ինչպես նաև քրիստոնեական արժեհամակարգի կրողներ չլինելու պատճառով:

Տևոր, լինելով կրոնական վարքագծի դրսևորման տարածված ձև, կարևոր դեր է ունեցել սիրիահայերի հավատքի ձևավորման և ամրապնդման գործում: Նրանց շրջանում երեք ամենատարածված տոներն են Նոր տարին, Քրիստոսի Ծնունդը, Ջատիկը, ապա՝ Ծաղկազարդն ու Խաղողօրհնեքը, Համբարձումն ու Վարդավառը, Սուրբ Սարգիսն ու Խաչվերացը, Տեառնընդառաջն ու Վարդանանցը և այլն: Սիրիահայ համայնքում լայն տարածում է ունեցել նաև Սիրիայի պետական տոն համարվող մայրերի տոնը՝ ի համեմատ ապրիլի 7-ի և մարտի 8-ի, որոնք սկսել են տոնել Հայաստանում: Ուշադրության է արժանի նաև ՀՀ անկախության տոնների տարածվածությունը նրանց մեջ. մայիսի 28-ը ավելի նախընտրելի է, քան սեպտեմբերի 21-ը՝ փաստելով առաջինի կարևորությունը սփյուռքահայ համայնքների համար:

3.4 Լեզվական վարքի փոխակերպումները սիրիահայերի շրջանում: Սիրիահայ ընտանիքներում հիմնական խոսակցական լեզուն արևմտահայերենն է, սակայն որոշակի փոխակերպումներ են նկատվել Հայաստան գալուց հետո. 5.4% ընտանիքներում խոսում են նաև արևելահայերեն: 4.3% կազմում են այն արաբախոս ընտանիքները, որոնց համար ՀՀ-ում ապրելու հանգամանքը ոչ մի կերպ չի անդադառնում լեզվական վարքի փոխակերպումների վրա: Ընդ որում, նրանք հիմնականում Դամասկոսից, Լամիշլիից եկած սիրիահայերն են: Ընկերական միջավայրում շփումներն ընթանում են առավելապես իրենց հարազատ լեզվի օգնությամբ, չնայած որ բավականին լավ խոսում են նաև

արևելահայերեն: *Գործընկերների* հետ հաղորդակցման ժամանակ արդեն արևելահայերենն է դառնում գերակա (54%), քանզի շատ սիրիահայեր ջանում են հասկանալի լինել դիմացինի համար:

Սիրիահայերը տարբեր մակարդակով են տիրապետում արևելահայերենին. *կարդալու* միջին ցուցանիշը 3.4 է (5 բալանոց սանդղակի պարագայում), ինչը նշանակում է միջինից բարձր մակարդակի կարողություն: *Գրել* կարողանալու ցուցանիշը 2.4 է, ինչը վկայում է միջինից ցածր մակարդակի մասին: Ստացվում է, որ նրանց կեսից ավելին՝ մոտ 52%-ը, կա՛մ ընդհանրապես չի տիրապետում, կա՛մ վատ է տիրապետում արևելահայերեն ուղղագրությանը, որի մեջ մեծ զանգված են կազմում միջնակարգ և թերի միջնակարգ կրթություն ունեցողները: Միջին և ավելի բարձր մակարդակով արևելահայերեն *հասկանում է* սիրիահայերի գերակշիռ մասը՝ միջին ցուցանիշը 3.5: Վատ տիրապետողները մեծամասամբ միջնակարգ և ցածր կրթություն ունեցողներն են, և կեսից ավելին՝ 2014 թ. տեղափոխվածները: Թեպետ քանակական ցուցանիշը բարձր է, սակայն որակական բնութագրումներն այլ բան են ասում հարցի մասին. ըստ նրանց՝ հայաստանյան բառապաշարի անբաժան մաս կազմող ռուսերեն բառերը ոչ միայն խորթ են հայի ինքնությանը, այլև խանգարում են լեզուն լիովին հասկանալուն:

ԳԼՈՒԽ ԶՈՐՐՈՐԴ **ՍԻՐԻԱԿԱՅԵՐԻ ՀԱՂՈՐԴԱԿՑՄԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԸ**

4.1 Սիրիահայերի շփման առանձնահատկությունները համայնքում և համայնքից դուրս: Նոր միջավայրին հնարավորինս շուտ հարմարվելու համար կարևոր են տարբեր բնույթի և հաճախակի շփումները տեղի բնակիչների հետ, իսկ համայնքի ներսում շփման ձևերը վկայում են այս հարցում ադապտացիայի առկա վիճակի մասին: Ըստ ուսումնասիրության արդյունքների՝ սիրիահայերի մեծ մասը՝ 63.4%, հյուրընկալվում է Սիրիայից եկած, իսկ մոտ 1/4 մասը՝ հայաստանցի իր հարազատներին, ազգականներին և ընկերներին: Մարզերում բնակվողների շրջանում գրեթե հավասար է շփման նախընտրությունը տեղի հայերի և համայնքի ներկայացուցիչների հետ:

Նրանց մոտ 11%-ը Հայաստանում ոչ ոքի չի հյուրընկալվում՝ պայմանավորված մի շարք սուբյեկտիվ և օբյեկտիվ գործոններով: Սակայն, հատկապես ՀՀ-ում մշտապես բնակվելու ցանկություն ունեցողների մեջ նկատվում է մեծ պատրաստակամություն և տարբեր խմբերի հետ շփման փորձ: Մասնավորապես, պետք է առանձնացնել *հարևանների* հետ շփումը՝ տոնական և ոչ տոնական օրերին փոխադարձ այցելություններով: *Գործընկերների* և *ընկերների* հետ երկարատև, ամենօրյա շփումը ևս միջմշակութային հաղորդակցության յուրահատուկ տեսակ է, որը մեծ դեր ունի տեղացի հայերի արժեքային համակարգին ծանոթանալու գործընթացում:

4.2 Սիրիահայերի ժամանցի կազմակերպումը Հայաստանում: Սիրիահայերի ժամանցը Հայաստանում բազմազան է և ընդգրկում է տարբեր ոլորտներ և ուղղություններ: Այս բազմազանության մեջ ամենաշատ տարածվածը *ընտանիքի* և *ընկերների հետ* ժամանակ անցկացնելն է. նրանց գերակշիռ մասը՝ 65.7%-ը, ազատ ժամանակն անցկացնում է սեփական համայնքի ներսում, մասնավորապես, ընտանեկան և ազգակցական շրջանակներում կա՛մ ակտիվ (գբոսանք), կա՛մ պասիվ (տանը, հյուրընկալություն) ձևով:

Նրանց ժամանցի կազմակերպման մեջ որոշակի դեր ունեն նաև *մեդիա տեխնոլոգիաները*՝ համացանց և հեռուստատեսություն, որոնք 1/7-րդ մասն են կազմում ընդհանուրի մեջ: *Ինֆոլեյկոուալ ժամանցի* կազմակերպումը համեմատաբար ավելի փոքր հաճախականություն է գրանցել (երաժշտություն լսել, գիրք կարդալ՝ 4.1%, լուսանկարչություն և այլ՝ 4.2%), ինչը, սակայն, անձի ինքնազարգացման և ինքնաճանաչման լայն

հնարավորություն կարող էր ապահովել: Կինոթատրոն և համերգ հաճախելու մշակույթը ևս շատ քիչ է տարածված նրանց շրջանում. ՀՀ-ում ապրելու տարիներին միայն 8.7%-ն է գնացել ֆիլմեր դիտելու: Պատճառը ոչ այնքան ֆինանսական դժվարություններն են, որքան ցուցադրվող ֆիլմերի լեզուն՝ ռուսերենն, ընկալելու խնդիրները: Թատրոնների և համերգների պարագայում լեզվական և ֆինանսական խնդիրները երկրորդային նշանակության են դառնում՝ որոշ չափով մեծացնելով նրանց մասնակցությունը մշակութային միջոցառումներին (թատրոն հաճախել են հարցվողների 22.8%-ը, իսկ համերգներ՝ 44.6%-ը):

Սիրիահայերի մեջ զարգացած է նաև *սրճարաններ/ռեստորաններ այցելելու* մշակույթը: Վայրի ընտրությունը պայմանավորված մի քանի գործոններով՝ «սիրիահայկական» միջավայրի առկայությունը, սրճարանների/ռեստորանների սեփականատերերի կամ աշխատողների սիրիահայ լինելը, դրանցից օգտվելու մատչելիությունը և այլն: *Ժամանցի յուրօրինակ ձև է նաև եկեղեցի այցելելը*, որտեղ նրանք գնում են՝ ոչ միայն պատարագներին մասնակցելու, այլև իրենց հայրենակիցներին հանդիպելու, հյուրասիրությունից օգտվելու համար: Վերջինս կազմակերպվում է Հայ Ավետարանական եկեղեցու կողմից, որտեղ այցելում են նաև Հայ Առաքելական և Հայ Կաթոլիկ եկեղեցու հետևորդները:

4.3 ՋԼՄ-ների նախընտրությունը սիրիահայերի շրջանում: Հայաստանյան սոցիալ-մշակութային կյանքին հարմարվելու գործում կարևոր դեր ունեն նաև ՋԼՄ-ները, հատկապես՝ հեռուստատեսությունը: Ըստ ուսումնասիրության արդյունքների՝ նրանց 71%-ը հետևում է հայկական հեռուստաալիքներին: Արաբական հեռուստաալիքներին հետևողները ևս որոշակի զանգված են կազմում ընդհանուր հեռուստալսարանի մեջ՝ 15.3%: Բացի այդ, 1.5%-ը թուրքական և 2.7%-ը այլ հեռուստաալիքների սպառող են համարվում: Այստեղ ուշադրության է արժանի նաև այն ցուցանիշը, որը վկայում է ընդհանրապես հեռուստացույց չդիտելու/չունենալու մասին՝ 9.5%: Հեռուստացույց չդիտողների մեծ մասը նախապատվություն է տալիս համացանցին՝ հետևյալ հիմնական պատճառներով. 1) ֆիզիկական հասանելիություն՝ պայմանավորված աշխատանքի բնույթով, 2) արբանյակային հեռուստաալիքների բացակայություն, ինչի պատճառով շատ սիրիահայեր, ովքեր ցանկանում են արաբական ալիքներով հետևել Սիրիային վերաբերող նորություններին, հնարավորություն չեն ունենում, 3) արաբալեզու էլեկտրոնային մամուլի առկայություն, ինչը համացանցն ավելի գերադասելի է դարձնում այլ լրատվամիջոցների նկատմամբ:

Սիրիահայերն իրենց ուշադրությունը հիմնականում սևեռում են *տեղեկատվական, վերլուծական հաղորդումների վրա*՝ դրանով բավարարելով Սիրիայի վերաբերյալ տեղեկատվության պահանջը: Հեռուստահաղորդումների մեջ մեծ դիտողականություն ունեն նաև *մշակութային, երաժշտական հաղորդումները*: Դիտվող հաղորդումների մեջ որոշակի կշիռ ունեն նաև հայկական և արաբական արտադրության *հեռուստասերիալները, մարզական և ժամանցային հաղորդումները*:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ատենախոսությունում առաջ քաշված խնդիրների վերլուծությունը հնարավորություն տվեց կատարելու հետևյալ եզրահանգումները.

- 2011 թ. Սիրիայում սկսված պատերազմի պատճառով հայ համայնքը ցրվեց աշխարհով մեկ, մեծ մասամբ՝ եվրոպական երկրներ, Կանադա, Լիբանան և Հայաստան: Եթե առաջինների դեպքում ընտրությունը պայմանավորված էր տվյալ երկրներ մուտք գործելու հնարավորություն ունենալով, սոցիալական ցանցի առկայությամբ, լավ աշխատանքի և բարեկեցիկ կյանքի հեռանկարով, փախստականի կարգավիճակի միջոցով

ապագան կառուցելու մտադրությամբ և այլ ռացիոնալ հիմնավորումներով, ապա սիրիահայերի զգալի մասը Հայաստան տեղափոխվելու որոշումը կայացրեց հուզական մակարդակում՝ առաջնային համարելով հայրենիքի գաղափարը:

- Սիրիահայերի ներհուսը ՀՀ սկիզբ դրեց նոր խնդիրների, որոնց հաղթահարմանը Հայաստանը գործնականորեն պատրաստ չէր: Այնուամենայնիվ, նրանց ընդունելու, առաջին օգնություն ցույց տալու, հայ հասարակությանն ինտեգրելու նպատակով բազմաթիվ ծրագրեր նախաձեռնվեցին և իրականացվեցին: Վերջիններս ներառել են տարբեր ուղղություններ՝ առաջին անհրաժեշտության կարիքների բավարարում, բնակարանային ապահովում, ֆինանսական, սոցիալական, բժշկական, հոգեբանական, իրավաբանական աջակցություն, կրթության և զբաղվածության հարցերում օժանդակություն, սպորտային, հանգստի և միջմշակութային միջոցառումների կազմակերպում, որոնք իրականացվել են պետական հաստատությունների, մասնավոր ընկերությունների, միջազգային, հասարակական և բարեգործական կազմակերպությունների կողմից:

- Թեպետ սիրիահայերը բարձր են գնահատում մինչև այժմ կատարված աշխատանքները, որոնք ներառված են նաև ՀՀ կառավարության կողմից մշակված ինտեգրման ռազմավարության մեջ, սակայն նրանց պարագայում անհրաժեշտություն կա այնպիսի քաղաքականության մշակման, որը կշեշտադրի ոչ միայն սոցիալական, տնտեսական, իրավական հարցերը, այլև նոր միջավայրում արևմտահայի ինքնությունն ու մշակույթը պահպանելու և զարգացնելու հնարավորությունները:

- Ի դեմս սիրիահայերի՝ Հայաստան տեղափոխվեց մարդկային մեծ ներուժ: Երեխաները մոտ մեկ չորրորդ մասն են կազմում նրանց մեջ, երիտասարդները՝ մոտ 28%-ը: Սոցիալականացման կարևոր փուլերը՝ կրթություն, աշխատանք, ամուսնություն, սիրիահայերի մեծ մասը սկսում է նոր միջավայրում: Նրանց կեսից ավելին տիրապետում է որևէ մասնագիտության, որը նպաստում է հայաստանյան աշխատաշուկայի աշխուժացմանն ու նորացմանը: Թեպետ բարձրագույն կրթության նկատմամբ պահանջարկը ձևավորվել է վերջին մի քանի տասնամյակում, այնուամենայնիվ, նրանց մոտ մեկ չորրորդ մասը սովորել/սովորում է բուհերում:

- Հայաստան տեղափոխված սիրիահայերը, կրելով քաղաքաբնակներին բնորոշ կենսակերպն ու պրակտիկաները, նախընտրեցին բնակվել Երևանում, հիմնականում Կենտրոն և Արաբկիր համայնքներում: Սիրիահայ ընտանիքների մեջ տասից մեկը որոշում կայացրեց ապրել մարզում, ընդ որում՝ մայրաքաղաքին մոտ բնակավայրերում: Ընդամենը 24 ընտանիք պատրաստակամություն հայտնեց բնակություն հաստատել ԱՀ-ում:

- Սիրիահայերի գերակշիռ մասը բնակվում է վարձով. այս գործոնը կարևորներից է, որն ուղղակի ազդեցություն ունեցավ/ունի նրանց՝ Հայաստանում կյանքը շարունակելու որոշման վրա: Սեփական բնակարաններում և պատճաշ կոմունալ-կենցաղային պայմաններում ապրելու հարցը եղել և այսօր էլ մնում է առաջնային լուծում պահանջող խնդիր:

- Բնակարանային խնդիրները, ինչպես նաև վերջին շրջանում տարածում գտած աշխատանքային միգրացիան էական ազդեցություն ունեցան սիրիահայերի ընտանիքի կառուցվածքի վրա. ՀՀ-ում բնակվելու տարիներին նվազեց երկսերունդ և եռասերունդ ընտանիքների թիվը՝ արդյունքում կրկնակի ավելացնելով խառը կազմով ապրող ընտանիքների թիվը:

- Սիրիահայերի՝ հայաստանյան սոցիալ-տնտեսական կյանքին հարմարվելու գործընթացում կարևոր դեր ունի աշխատանքը: Սիրիայի համեմատ՝ ՀՀ-ում աշխատանք գտնելը դժվար է, իսկ նրանց խոչընդոտող գործոնները բազմաթիվ՝ կրթության և մասնագիտության անհամապատասխանություն հայաստանյան աշխատաշուկայի պա-

հանջներին, լեզուների, մասնավորապես արևելահայերենի և ռուսերենի վատ իմացություն/չիմացություն, ցածր վարձատրություն, նրանց համար անսովոր աշխատանքային գրաֆիկ, ՀՀ-ում մշտական բնակություն հաստատելու ցանկության բացակայություն և այլն:

- Սիրիահայ գործարարների մեծ մասը Հայաստանում չի կարողանում շարունակել նույն ձեռնարկատիրական գործունեությունը, ինչ Սիրիայում՝ չնայած ընձեռված վարկային արտոնություններին: Սակայն ոմանց հաջողվում է խանութներ կամ սրճարան-ռեստորաններ հիմնել՝ ստեղծելով յուրօրինակ ժամանցի վայր ինչպես սիրիահայերի, այնպես էլ հայաստանցիների համար: Նրանք ոչ միայն շրջանառության մեջ են դնում սիրիական խոհանոցը, այլև նոր մշակույթ հաղորդում սպասարկման ոլորտին:

- Եթե Սիրիայում կանանց՝ ձեռագործությամբ և խոհարարությամբ զբաղվելը դիտարկվում էր որպես սիրելի զբաղմունք, իսկ դրանից ստացված եկամուտը՝ ուղղվում բարեգործական ծրագրերի իրականացմանը, ապա նույն այդ գործունեությունը Հայաստանում համարվում է լրացուցիչ, երբեմն նաև՝ հիմնական եկամտի աղբյուր սիրիահայ ընտանիքների համար:

- Եթե Սիրիայի քաղաքական կյանքում հայերը ոչ այնքան ակտիվ մասնակցություն են ունեցել՝ պայմանավորված սփյուռքի գործառնության առաջնահերթություններով, ապա, տեղափոխվելով նոր միջավայր, նրանք անցնում են հայաստանյան քաղաքական մշակույթին հարմարվելու փուլերով: Հատկապես կուսակցական պատկանելիություն ունեցողները ձևավորվում և հանդես են գալիս՝ որպես քաղաքականապես ակտիվ խումբ՝ նախ ՀՀ-ի ներքաղաքական անցուղարձի նկատմամբ հետաքրքրություն ցուցաբերելով, ընտրություններին մասնակցելով, իսկ հեղափոխության օրերին նաև իրենց ընկերների հետ ցույցերին մասնակցելով:

- Սիրիահայ համայնքում գործող բազմաթիվ միություններին անդամակցությունը դադարեցնելով՝ նոր միջավայրում սիրիահայերի հասարակական գործունեությունն ենթարկվում է էական փոփոխությունների: Եթե Սիրիայում կանայք բավականին ակտիվ են եղել այդ առումով, ապա Հայաստանում նրանք չորս անգամ քիչ են հասարակական կառույցներին անդամակցող տղամարդկանցից: Երեխաների կյանքում հասարակական և մշակութային ակտիվությունը կարևորելով՝ ծնողներն այլ ընտրություն չունեն, քան հնարավորության դեպքում տարատեսակ խմբակներին (սպորտային, մշակութային, սկաուտական) և ամառային ճամբարներին իրենց երեխաների մասնակցությունն ապահովելը:

- Սիրիահայերը ներառված են հայաստանյան կրթական համակարգի մեջ, որտեղ ադապտացիայի դժվարությունները հիմնականում պայմանավորված են կոգնիտիվ և հաղորդակցական գործոններով: Եթե տեղացիների հետ հաղորդակցության հարցը ժամանակի ընթացքում կարգավորվում է, ապա կոգնիտիվ մակարդակի խնդիրները՝ կրթական ծրագրերի տարբերությունը, լեզվական առանձնահատկությունները, շարունակում են ուղեկցել նրանց:

- Սիրիահայերի շրջանում առանձնահատուկ կերպով է ընթանում մշակութային ադապտացիան: Նրանք, պահպանելով արևմտահայերենի իմաստային և ռճական նրբերանգները, լավ են հասկանում արևելահայերենը, ինչին նպաստել են բազմաթիվ գործոններ՝ հայկական հեռուստատեսություն դիտելը, արևելահայերեն գրականություն ընթերցելը, նախկինում ունեցած գործնական, բարեկամական կապերն ու նոր ձևավորված աշխատանքային շփումները Հայաստանում, սիրիահայերի ամուսնությունները հայաստանցիների հետ, նոր հաստատված ընկերական և բարեկամական հարաբերությունները: Թեպետ, հատկապես ավագ սերնդի շրջանում, արևմտահայերեն լեզուն գործածելն ինքնության հարց է, և նույնիսկ շատերը խիստ անհանդուրժողական են հա-

յերենում գործածվող ռուսերեն բառերի նկատմամբ, սակայն նրանց մեջ էլ տարածված է արաբերենի կիրառությունը՝ որպես «գաղտնի» լեզու:

- Սիրիահայերի և հայաստանցի հայերի կրոնական արժեհամակարգում ակնհայտ տարբերություններ կան: Այս համատեքստում վերջիններիս մոտ առկա է անհանդուրժողականության որոշակի մթնոլորտ, որը պայմանավորված է հայաստանցիների հավատի պակասի/բացակայության, եկեղեցու և եկեղեցական արարողությունների նկատմամբ անտարբերության, կրոնական տոների չիմացության, դրանք ըստ էության չնշելու, նաև քրիստոնեական արժեհամակարգի կրողներ չլինելու հանգամանքներով:

- Չնայած սիրիահայերի կրոնական վարքագծում ևս փոփոխություններ են տեղի ունեցել՝ և՛ եկեղեցի այցելելու հաճախականության, և՛ կրոնա-ավանդական տոներին մասնակցության տեսանկյունից՝ պայմանավորված տնտեսական, մշակութային, հոգեբանական գործոններով, այնուամենայնիվ, նրանց համար հավատքի հարցը ներքին հոգևոր հարց է, և կրոնական արժեհամակարգի բախումն ազդեցություն չի թողնում տեղացիների հետ անմիջական փոխազդեցությունների վրա:

- Սիրիահայերի արժեքանորմատիվ համակարգում ընտանիքն առաջնային տեղ ունի. նրանք հայի ինքնության պահպանման գործում եկեղեցուց հետո կարևոր դերակատարությունը վերագրում են ընտանիքին, ուստի, հայկական միջավայրից զույգի ընտրությունը լավ ընտանիք կազմելու ամենակարևոր գրավականն է: Նրանց շրջանում բավականին բարձր է այլէթնիկ ամուսնությունների նկատմամբ անհանդուրժողականությունը, ավելին, այն մեծանում է այլակրոն ազգերի համատեքստում:

- Սիրիահայերի մեծ մասը կողմ է կայաստանցիների հետ ամուսնությանը՝ ի տարբերություն վերջիններիս: Գենդերային ցուցանիշն այստեղ էական գործոն է, քանզի հիմնականում տղամարդիկ հավանություն չեն տալիս սիրիահայ աղջիկների հետ ամուսնությանը: Այս վերաբերմունքը փոխադարձ է, քանի որ մեծ մասամբ սիրիահայ աղջիկներն էլ են դեմ հայաստանցի տղաների հետ ամուսնությանը:

- Նրանց շրջանում ընտանիքի ձևավորման և պահպանման հիմքերը դրված են քրիստոնեական ավանդույթների վրա: Ամուսնական ծիսակատարությունների մեջ նրանց գերակշիռ մասը պարտադիր է համարում եկեղեցական պսակադրությունը, շատ են կարևորում նաև հարսանեկան հանդիսությունը և ամուսնությունը նույն օրը գրանցելու արարողությունը: Եթե առաջին երկուսը կարողանում են պահպանել նոր սոցիալ-մշակութային միջավայրում, ապա վերջինս, ըստ Հայաստանում ընդունված սովորության, այլևս չի համարվում նրանց ամուսնական ծիսակարգի պարտադիր տարր:

- Նրանց արժեքային համակարգում ամրագրված է, որ ընտանիքը պետք է լինի ամբողջական. ամուսնալուծությունը պետք է բացառվի հայոց ամուսնական մշակույթից: Հետևաբար, չեն ընդունում, ըստ իրենց, «Հայաստանում լայն տարածում ունեցող ամուսնալուծության» երևույթը: Մեծ մասը չի ընդունում նաև միայնակ մոր ինտիտուտը և բացականչական է վերաբերվում երիտասարդ զույգերի ազատ հարաբերություններին:

- Ըստ սիրիահայերի՝ հայկական ընտանիքներում տան գլխավորը՝ տղամարդը, ընտանիքին պետք է ապահովի ֆինանսապես, իսկ կինը պատասխանատու լինի կենցաղային կարևոր և երկրորդային հարցերի համար: Նրանց այս մտածելակերպը Հայաստանում տեղի է տալիս՝ հանդուրժողականության և հարգանքի մթնոլորտ ձևավորելով աշխատող և ընտանիքին ֆինանսապես նեցուկ կանանց շուրջ:

- Նոր միջավայրում էական փոփոխությունների է ենթարկվում նաև նրանց հաղորդակցության մշակույթը: Եթե Սիրիայում համայնքի ներսում փոխայցելություններն ամենօրյա էին, մտերմիկ և կազմում էին տոնական ծիսակատարությունների պարտադիր բաղադրիչը, ապա Հայաստանում այն դառնում է պասիվ ու սահմանափակ՝ պայմանավորված հաճախակի հանդիպելու ֆիզիկական և ֆինանսական դժվարություններով,

աշխատանքային ծանրաբեռնվածությամբ և այլ գործոններով: Կենցաղային սովորու-
թյունների և ավանդույթների տարբերությունը, մի կողմից, տանում է տեղացիների հետ
հաղորդակցվելու սահմանափակմանը, մյուս կողմից՝ համայնքի ներսում նոր կապերի
ձևավորմանն ու ամրապնդմանը: Հաղորդակցության նույն մշակույթը, որը բնորոշ է
այս համայնքին, չի ձևավորվում տեղացիների հետ հարաբերություններում:

- Սիրիահայերն իրենց հետ Հայաստան են բերել համայնքային կյանքին բնորոշ
ժամանցային պրակտիկաներ: Նրանց համար ժամանցը դառնում է նպատակային գոր-
ծունեություն՝ ուղղված ոչ թե նոր միջավայրում նոր սոցիալական կապերի ստեղծմանն
ու զարգացմանը, այլ հին կապերի վերազնահատմանն ու ամրապնդմանը: Ժամանցի
միջոցով իրենց զարգացմանն ուղղված գործողությունն առավելապես արտահայտվում է
տեսաբանական վայրեր այցելելով՝ հարստացնելով հայկական նյութական մշակույթի մասին
գիտելիքները: Սիրիայում գործող բազմաթիվ միություններն այսօր չեն փոխարինվում
Հայաստանում գոյություն ունեցող տարաբնույթ մշակույթային կազմակերպություններ-
ով, որոնք կնպաստեին նրանց արագ ինտեգրմանը:

- Սիրիահայերի աղապատացիայի գործընթացում առանցքային դեր ունեն հայկա-
կան հեռուստաընկերությունները: Երբ խոսքը վերաբերում է մշակույթային և ժամանցա-
յին հաղորդումներին, նրանք նախընտրում են հայկական, իսկ երբ լուրերին՝ արաբա-
կան հեռուստաալիքները: Հեռուստահաղորդումներին հետևելու բազմազանությունը
արտացոլում է նրանց ինքնությունը՝ մի կողմից, խորը կապվածություն հայկական մշա-
կույթին, մյուս կողմից, նախ պատկանելիություն արաբական հասարակությանը, ապա՝
ներքին պարտավորվածություն նրանց հանդեպ:

- Սիրիահայերի միգրացիոն վարքագծի համեմատական վերլուծությունը ցույց է
տալիս Հայաստանից հեռանալու նրանց տրամադրվածության փոփոխությունը. եթե ՀՀ
տեղափոխվելու սկզբնական շրջանում նրանց կեսից ավելին, ապա 4-5 տարի անց կես-
սից ավելի քիչ մարդ է այլ երկիր մեկնելու ցանկություն և մտադրություն հայտնում: Ի
դեպ, նրանք այդ հարցում ավելի վճռական են դառնում վերջին տարիներին՝ երկրից
հեռանալու ուղղությամբ ռեալ քայլեր ձեռնարկելով: Եթե առաջին տարիներին նրանց
մեջ տասից մեկն էր գտնվում գործողության փուլում, ապա տարիներ անց ոչ միայն շա-
տանում է նրանց թիվը, այլև այդ քայլերն են դառնում տարաբնույթ՝ ձեռք բերված ՀՀ
քաղաքացիությունից հրաժարվել, տարբեր երկրների դեսպանություններ դիմել, այլ
երկրներում բիզնես հիմնադրել և այլն:

- Տարիների ընթացքում փոխվում է նաև միգրացիայի պատճառների հարաբե-
րակցությունը. Հայաստանը լքելու հիմքում ընկած սոցիալ-տնտեսական գործոնը շարու-
նակում է առաջնային մնալ՝ 4-5 տարի անց ավելի խորանալով, իսկ մշակույթային և
հոգեբանական բնույթի գործոններն աստիճանաբար հաղթահարվում են աղապատա-
ցիայի փուլերի ընթացքում:

Ատենախոսության հիմնադրույթներն արտացոլված են հեղինակի հետևյալ հրապարակումներում.

1. Հակոբյան Գ., Սիրիահայերի սոցիալ-ժողովրդագրական ներուժը ՀՀ-ում, «Լրա-
բեր հասարակական գիտությունների», 2015, թ. 3 (645), էջ 181-190:

2. Հակոբյան Գ., Սիրիահայերի զբաղվածության հիմնախնդիրները ՀՀ-ում (էթնո-
սոցիոլոգիական ուսումնասիրություն), «ՀՀ սոցիալ-տնտեսական կայուն զարգացման
հիմնախնդիրները», գիտական հոդվածների ժողովածու (խմբ.՝ Կ. Առաքելյան և ուրիշ-
ներ), թ. 1 (22), Երևան, «Անանիա Շիրակացի» միջազգային հարաբերությունների հա-
մալսարան», 2015, էջ 293-298:

3. Акопян Г., Роль трудоустройства при адаптации сирийских армян в Армении (социологическое исследование), ДИАСПОРЫ, независимый научный журнал № 1-2, 2015, стр. 170-182.

4. Հակոբյան Գ., Սիրիահայերի քաղաքական մասնակցության առանձնահատկությունները ՀՀ-ում, «Բանբեր Երևանի համալսարանի. հասարակական գիտություններ», 2016, թ. 2, էջ 48-56:

5. Հակոբյան Գ., ՀՀ ներգաղթած սիրիահայերի կրոնական և տոնածիսական վարքագիծը, «ԵՊՀ Աստվածաբանության ֆակուլտետ. Տարեգիրք», գիտական հոդվածների ժողովածու (խմբ.՝ Ա. Ժամկոչյան և ուրիշներ), հ. ԺԱ, Երևան, «ԵՊՀ», 2016, էջ 360-373:

6. Հակոբյան Գ., Արդի հայ ընտանիքը փոխակերպվող հասարակությունում (հեղինակակցությամբ՝ Մ. Գալստյան, Ռ. Օհանջանյան, Թ. Զաքարյան), Երևան, «Գիտություն», 2017, 382 էջ:

7. Հակոբյան Գ., Սիրիահայերի ժամանցի կազմակերպման առանձնահատկությունները ՀՀ-ում, «ԵՊՀ Աստվածաբանության ֆակուլտետ. Տարեգիրք», գիտական հոդվածների ժողովածու (խմբ.՝ Ա. Ժամկոչյան և ուրիշներ), հ. ԺԲ, Երևան, «ԵՊՀ», 2017, էջ 380-392:

8. Հակոբյան Գ., Սիրիական ճգնաժամի արդյունքում ՀՀ ներգաղթած սիրիահայերի կրոնական վարքագիծը, «ԵՊՀ ՈՒԳԸ գիտական հոդվածների ժողովածու. հասարակական գիտություններ» (խմբ.՝ Հ. Ավանեսյան և ուրիշներ), 1.4 (21), Երևան, «ԵՊՀ», 2017, էջ 41-51:

9. Հակոբյան Գ., Սիրիահայերի հաղորդակցության առանձնահատկությունները ՀՀ-ում, «Լրաբեր հասարակական գիտությունների», 2017, թ. 2 (650), էջ 366-374:

10. Հակոբյան Գ., Լեզուն որպես սիրիահայերի մշակութային ադապտացիայի կարևոր բաղադրիչ (էթնոսոցիոլոգիական ուսումնասիրություն), «ՀԱԻ-ի աշխատություններ 1, Հայ ժողովրդական մշակույթ, XVII, Ավանդականը և արդիականը հայոց մշակույթում» (խմբ.՝ Հ. Մարության և ուրիշներ), Երևան, «ՀԱԻ», 2018, էջ 143-154:

11. Հակոբյան Գ., ԶԼՄ-ների դերը սիրիահայերի սոցիալ-մշակութային ադապտացիայի գործընթացում (հեռուստատեսության օրինակով), «Մերձավոր Արևելք. Պատմություն, քաղաքականություն, մշակույթ, XIII» (խմբ.՝ Մ. Ղահրիյան և ուրիշներ), Երևան, «Գիտություն», 2018, էջ 157-171:

12. Հակոբյան Գ., Հայկական ընտանիքի մոդելը սիրիահայերի պատկերացումներում, «Հայ ընտանիքն արդի մարտահրավերների համատեքստում» (խմբ.՝ Ռ. Կարապետյան, Ս. Բարսեղյան), Երևան, «ՀԱԻ», 2019, էջ 147-160:

АКОПЯН ГАЯНЕ ЛЕВОНОВНА

ПРОБЛЕМЫ СОЦИАЛЬНО-КУЛЬТУРНОЙ АДАПТАЦИИ СИРИЙСКИХ АРМЯН В РЕСПУБЛИКЕ АРМЕНИИ

Резюме

Основной целью диссертации является выявление особенностей социально-культурной адаптации сирийских армян временно или навсегда переселившихся в Армению после 2011 года, основываясь на результатах этносоциологического исследования. Из-за войны, начавшейся в Сирии, армянская община рассеялась по всему миру. Основными направлениями были европейские страны, Канада, Ливан и Армения. Большинство из них приняло решение переехать в Армению на эмоциональном уровне, считая идею Родины первостепенным. Поток армян из Сирии в Армению стало началом новых проблем, к преодолению которых Армения не была готова. Несмотря на это, множество программ было организовано и осуществлено с

целью принятия и оказания первой помощи армянам из Сирии, их структурной, социальной, культурной и эмоциональной интеграции в армянское общество.

Имея городской образ жизни и практики типичные городскому населению, сирийские армяне предпочли поселиться в Ереване. Большинство из них арендуют квартиру, и этот фактор является решающим для принятия решения о продолжении проживания в Армении. Важным фактором для адаптации к новой социально-экономической жизни является также работа. По сравнению с Сирией, в Армении трудно найти работу, а препятствующие факторы – многочисленны: несоответствие образования и профессии, требованиям армянского рынка труда, плохое или вообще незнание русского и восточно-армянского языков, низкая зарплата и т.д. Несмотря на налоговые привилегии предоставленные армянам из Сирии, большинство бизнесменов не могут продолжить ту же самую предпринимательскую деятельность, что в Сирии. Но некоторым удается основать собственные магазины, кафе-рестораны, тем самым создавая своеобразное место для досуга, как для сирийских армян, так и для армян, проживающих в Армении. Они не только пускают в оборот сирийские блюда, но также придают новую культуру сфере обслуживания. Переселившись в новую среду, они также проходят через адаптацию армянской политической культуры. В частности, армяне из Сирии, которые имеют партийную принадлежность, выступают в качестве активной политической группы, интересуясь внутривнутриполитическими событиями Армении. В новой среде существенно меняется и их общественная деятельность. Если в Сирии женщины были вполне активны в этом плане, то в Армении их число в общественных организациях в четыре раза меньше мужчин. Армяне из Сирии вовлечены в образовательную систему, где сложности адаптации в основном обусловлены когнитивными и коммуникационными факторами. Если проблемы общения с местными жителями со временем разглаживаются, то проблемы когнитивного уровня такие, как разница образовательной программы, языковые особенности, продолжают сопровождать их.

Культурная адаптация армян из Сирии проходит специфическим образом. Сохраняя смысловые и стилевые нюансы западно-армянского языка, в то же время они хорошо понимают восточно-армянский. Использование западно-армянского языка для них вопрос идентичности, и даже некоторые проявляют интолерантность к употреблению русских слов в армянском языке, несмотря на то, что среди них распространено использование арабского, как “секретного” языка. Существуют очевидные различия в религиозных ценностях сирийских армян и армян в Армении. В их поведении произошли изменения с точки зрения частоты посещения церкви, участия в традиционных религиозных праздниках. Несмотря на эти изменения, тем не менее, вопрос веры для них нечто внутреннее духовное, и различия в национально-религиозных ценностей не влияют на взаимодействие с местными жителями.

В ценностно-нормативной системе сирийских армян первостепенное значение имеет семья. В сохранении армянской идентичности главную роль предоставляют семье, после церкви, поэтому выбор напарника/напарницы из армянской среды является самым важным залогом успеха этого процесса. Уровень интолерантности среди них к бракам с иностранцами довольно высок, более того, он растет особенно в контексте наций с другой религией. Формирование и сохранение семьи также основано на христианских традициях. Среди брачных ритуалов венчание в церкви считается обязательным для большинства из них. Важным считается также проведение церемонии венчания и регистрации брака в один и тот же день. Если им удастся сохранять первые две церемонии в новой социально-культурной среде, то последнее, согласно принятому в Армении обычаю, больше не является обязательным элементом ритуала. По мнению сирийских армян, глава армянской семьи, мужчина, должен хотя бы обеспечить семью материально, а женщина должна нести ответственность за первостепенные и второстепенные проблемы быта.

Их культура общения также подвергается значительным изменениям в новой среде. Если взаимные визиты внутри общины в Сирии были ежедневными, душевными и являлись обязательными компонентами праздничных ритуалов, то в Армении они стали пассивными и ограниченными из-за частых физических и финансовых трудностей, из-за нагрузок работе и других факторов. Разница в образе жизни и традициях, с одной стороны, приводят к ограничению общения с местными жителями, с другой – способствуют формированию и укреплению новых связей внутри общины. Сирийские армяне также принесли с собой присущей общинной жизни практики времяпрепровождения. Для них досуг становится целенаправленной деятельностью, направленным не на создание и развитие новых социальных отношений в

новой среде, а на переоценку и укрепление старых связей. Существующие в Сирии многие союзы сегодня не заменяются различными культурными организациями Армении, которые способствовали бы быстрой интеграции сирийских армян. В процессе их адаптации огромную роль играют армянские телевидения. Когда речь идет о культурных или досуговых программах, то они предпочитают армянские телеканалы, а когда о новостях – арабские. Просмотр разнообразных телевизионных программ отражает их идентичность: с одной стороны, глубокую связь с армянской культурой, с другой - принадлежность к арабскому обществу и благодарность ему.

Сравнительный анализ миграционного поведения сирийских армян свидетельствует об изменении эмиграционного настроения. Если на первоначальном этапе иммиграции в РА половина сирийских армян хотела покинуть страну, то 4-5 лет спустя такое намерение выразили менее половины мигрантов. Если в первые годы многие хотели вернуться обратно, то теперь рассуждают более трезво, уменьшая шансы на возвращение в Сирии. С течением времени меняется также пропорциональность причин миграции: социально-экономический фактор, лежащий в основе эмиграции из Армении, продолжает оставаться главным, углубляясь в течение 4-5 лет, а культурные и психологические факторы постепенно преодолеваются на этапах адаптации.

NAKOBYAN GAYANE LEVON

PROBLEMS OF SOCIO-CULTURAL ADAPTATION OF SYRIAN ARMENIANS IN THE REPUBLIC OF ARMENIA

Summary

The main purpose of the dissertation is to reveal the peculiarities of the socio-cultural adaptation of Syrian Armenians who have been temporarily or permanently residing in Armenia since 2011. It is based on the results of the ethno-sociological research. Due to the war in Syria, the Armenian community scattered around the world, mostly in European countries, Canada, Lebanon and Armenia. Most of them decided to move to the Republic of Armenia on an emotional basis, prioritizing the idea of the homeland. The influx of Syrian Armenians to the Republic of Armenia led to new problems, which Armenia was not ready to overcome in practice. However, numerous programs were initiated and implemented to accept them, provide first aid, and integrate them into the Armenian society from a structural, social, cultural and emotional point of view.

Having the lifestyle and practices typical of urban areas Syrian Armenians mostly preferred to live in Yerevan. Most of them live in rented dwellings today. This factor is one of the important ones and directly influenced/influences their decision about continuing their lives in Armenia. Employment also plays an important role in adapting to new socio-economic life. Compared to Syria, finding a job in the RA is difficult, and impediments for them are numerous: education and occupation mismatch with Armenian labour market requirements, poor knowledge of languages, particularly Eastern Armenian and Russian, low pay, and so on. Despite the credit privileges provided to them, most Syrian-Armenian businessmen cannot continue the same business in Armenia as they used to do in Syria. But some manage to set up their shops, as well as cafes and restaurants, creating a unique leisure space for both Syrian Armenians and local Armenians. They are not only able to market new Syrian dishes but also to bring a new culture to the service sector. After moving to a new environment they also go through stages of adapting to the Armenian political culture. Especially those Syrian Armenians who have political party affiliation have been formed and acted as a politically active group with an interest in the internal political developments in Armenia. Their social activities have also undergone significant changes in the new environment. While women in Syria used to be quite active in this regard, in Armenia they are four times less likely to join public organizations compared to men. Syrian Armenians are included in the Armenian education system, where adaptation difficulties are mainly driven by cognitive and communication factors. While the issue of communication with locals has resolved over time, the cognitive-level problems - differences in educational programs and language features - continue to be real.

Cultural adaptation is taking place in a distinctive way among Syrian Armenians. They understand Eastern Armenian well, preserving the semantic and stylistic nuances of Western Armenian. Their use of Western Armenian is a matter of identity for them, and many are even extremely

intolerant to the use of Russian in Armenian language thinking, even though the usage of Arabic as a “secret” language is widespread among them. There are obvious differences in the religious values of Syrian Armenians and Armenians from Armenia. Although there have been changes in their behaviour both in terms of frequency of church visits and participation in traditional religious holidays, the issue of faith is an internal spiritual matter, and the clash of national-religious values has no impact on the direct interactions with locals.

The notion of family is essential in Syrian Armenians' value system. According to them, family plays the second important role after church in the preservation of the Armenian identity, so choosing a partner from the Armenian community is the main guarantee of success of this process. The level of intolerance towards marriages with foreigners is quite high amongst them; moreover, it increases especially in the context of nations with a different religion. The foundations of family formation and preservation are also based on Christian traditions. The majority of them consider church marriage to be obligatory in the marriage rituals. The ceremony of registering the marriage and wedding on the same day is also very important to them. If they can keep the first two traditions in a new socio-cultural environment, the latter one, as is customary in Armenia, is no longer considered an obligatory element of their marriage ritual. According to Syrian Armenians, the head of the household in Armenian families, the man, has to provide financially for the family, and the woman is responsible for primary and secondary household matters.

Their communication culture is also undergoing significant changes in the new environment. Whereas mutual visits within the community in Syria used to be a daily, intimate and a mandatory component of holiday rituals, in Armenia it became passive and limited due to physical and financial difficulties, workload, and other factors. The difference in lifestyles and traditions, on the one hand, leads them to limit communication with locals, and on the other hand, to form and strengthen new relationships within the community. Syrian Armenians have also brought with them leisure activities typical to community life. For them, leisure becomes a purposeful activity, but not for the creation and development of new social relationships in the new environment, but for reassessment and reinforcement of the old ones. Many unions in Syria today are not replaced by the various cultural organizations existing in Armenia that would facilitate the quick integration of Syrian Armenians. Armenian TV companies play a key role in their adaptation process. When it comes to cultural and entertainment programs, they prefer Armenian channels, however for consumption of news they give preference to-Arabic channels. The variety of preferred television programs reflects their identity - on the one hand, a deep connection with the Armenian culture, on the other hand, belonging to Arab society, and then an internal commitment to them.

The comparative analysis of Syrian Armenians' migration behaviour reveals a change in their disposition to leave Armenia. In the initial period after moving to the RA more than half of them have expressed a desire and intention to leave for another country, but four-five years later less than half of them have such a desire and intention. If in the early years a lot of people wanted to go back, now they think more soberly, reducing the likelihood of moving to Syria. The ratio of causes of migration has also changed over the years. The socio-economic factor underlying the intention to leave Armenia continues to be a priority, deepening four-five years later, but cultural and psychological factors have been gradually overcoming during the adaptation stages.